ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական այլ մարմին գործուղվելու դեպքում դիվանագետի վարձատրությունն իրականացվում է սույն օրենքի 6-րդ գլխով սահմանված դրույթներին համապատասխան, բացառությամբ քաղաքական, վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող այն դիվանագետների, որոնց հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները սահմանված են սույն օրենքի հավելված 1-ով: Օտարերկրյա պետությունում ծառայողական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցման չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի N 1 հավելվածի աղյուսակում «Հատուկ հանձնարարություններով դեսպան» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«Արտակարգ և լիազոր դեսպան, միջազգային կազմակերպությունում մշտական ներկայացուցիչ	7.50».

Հոդված 3. N 9 հավելվածի «Դիվանագիտական ծառայություն» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Դիվանագիտական ծառայություն

Դիվանագիտական ծառայություն								
Աշխատավարձի մակարդակները	*Հիմնական աշխատավարձի բնականոն աճը*	***1***	***2***	***3***	***4***	***5***	***6***	***7***
		Կցորդ	*Երրորդ քարտու-ղար*	*Երկրորդ քարտու-ղար*	*Բաժնի խորհրդական, առաջին քարտուղար, փոխհյուպատոս*	*Խորհրդական, Բաժնի վարիչ (պետ), հյուպատոս*	*Վարչության պետ, գործերի հավատարմատար, գլխավոր հյուպատոս, դեսպանորդ-լիազոր նախարար*	*Առանձնացված սպորա-բաժանման ղեկավար*
11	*Աճ չկա*	2.66	3.11	3.64	4.40	5.34	6.49	7.91
10	*Երեք տարին մեկ*	2.58	3.01	3.53	4.27	5.17	6.29	7.65
9		2.50	2.92	3.42	4.13	5.01	6.09	7.41
8		2.42	2.83	3.31	4.01	4.85	5.89	7.17
7	*Երկու տարին մեկ*	2.35	2.75	3.21	3.88	4.70	5.71	6.94
6		2.28	2.66	3.11	3.76	4.55	5.52	6.72
5		2.21	2.58	3.02	3.64	4.41	5.35	6.50
4	*Յուրաքանչյուր տարի*	2.15	2.50	2.92	3.53	4.27	5.18	6.29
3		2.08	2.43	2.83	3.42	4.14	5.01	6.09
2		2.02	2.35	2.75	3.31	4.01	4.86	5.89
1		1.96	2.28	2.66	3.21	3.88	4.70	5.71

»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող ամսվա առաջին օրվանից: